



ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԻ ՀԱՄԱՐ

Հայեցակարգ

Նախագծի երկրորդ տարբերակ
2006թ. հունիս

Վաշինգտոն • Երևան
www.armpolicyresearch.org

Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբ

Առաքելություն

«Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբը» (AIPRG) ոչ-կուսակցական և ոչ-քաղաքական կազմակերպություն է, որը հետազոտություններ է կատարում և խրախուսում է քննարկումներ հասարակական կառավարման խնդիրների շուրջ Հայաստանում և սփյուռքում: AIPRG-ն նպատակ ունի համախմբել Հայաստանի մասին գոյություն ունեցող գիտական միտքը՝ միավորելով տնտեսագիտության, քաղաքագիտության, իրավունքի և պետական կառավարման բնագավառում աշխատող և ակնառու գիտնականների և փորձագետների: Իր հետազոտությունների և կոնֆերանսների միջոցով խումբը համագործակցում է զարգացման գործակալությունների, միջազգային ֆինանսական ինստիտուտների և քաղաքական գործիչների հետ՝ նպատակ ունենալով ընդարձակել տեղեկատվությունը Հայաստանին վերաբերող զարգացման խնդիրների շուրջ:

AIPRG-ին գրանցված է Վաշինգտոնում և Երևանում իբրև հասարակական կազմակերպություն և իր մեջ է միավորում 40-ից ավելի անդամներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
I. Հայաստանի համար երկքաղաքացիության հնարավոր կարգավորումների հիմքում ընկած տրամաբանությունը	4
II. Ներկայացված կարգավորումների դրույթները և պայմանները	6
Հիմնական դրույթներ	6
Իրավական հիմունքներ և հարակից հիմնախնդիրներ	7
Քվեարկելու իրավունք	8
Ընտրվելու և քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակվելու իրավունք	9
Հարկային պարտավորություն	10
Զինվորական պարտավորություն	11
ՀՔ կարգավիճակի վերահսկում	12
III. Առաջադրված կարգավիճակի ազդեցությունը Հայաստանի ներկայիս քաղաքացիների վրա	13
Գրականության ցանկ	14
Նկար 1. Քաղաքացիների պատասխանատվություններն ու սահմանափակումները՝ ըստ տարբեր սցենարների	15

Երկքաղաքացիության կարգավորման տարբերակ հայկական սփյուռքի համար՝ հայեցակարգ

Ներածություն

- 1990թ.-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի կողմից ընդունված Անկախության հռչակագրի համաձայն՝ «Յուրաքանչյուր սփյուռքահայ ունի ՀՀ քաղաքացիության իրավունք» (Անկախության հռչակագիր, 1991թ., Հոդված IV):
- 1995 թ.-ին ՀՀ Սահմանադրությունը հստակորեն արգելեց երկքաղաքացիությունը: Այնուհետև, 2005թ.-ի նոյեմբերին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում Սահմանադրական բարեփոխումները հանգեցրին այդ արգելքի վերացմանը: Որպես Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիության հետ առնչվող խնդիրների իրավական կարգավորման հիմնական գործիք է ծառայում 1995թ. Քաղաքացիության մասին օրենքը:
- Ներկայումս մոտ 5-6 միլիոն էթնիկ հայեր, որոնք կազմում են մոտ և հին սփյուռքը, բնակվում են Հայաստանի տարածքից դուրս: Ըստ պաշտոնական տվյալների Հայաստանի բնակչությունը կազմում է 3 միլիոնից մի փոքր ավել, սակայն ոչ պաշտոնական գնահատականները մատնանշում են ավելի փոքր թիվ:
- Սփյուռքի հայերը կարող են ստանալ *հատուկ բնակության (ՀԲ) կարգավիճակ*, ինչը շնորհվում է նաև այն օտարերկրացիներին, որոնք Հայաստանում զբաղվում են հետազոտական, մշակութային կամ ձեռնարկատիրական գործունեությամբ, և դրա ժամկետը տաս տարի է: ՀԲ կարգավիճակը օտարերկրացիներին մի շարք առավելություններ է շնորհում, մինչդեռ նույն կարգավիճակը, Հայաստանի քաղաքացիների հետ համեմատած, ավելի քիչ իրավունքներ (պարտավորություններ) է տալիս: Մասնավորապես, ՀԲ կարգավիճակ ունեցողները իրավունք չունեն մասնակցել ընտրություններին (ինչպես քվեարկողի, այնպես էլ ընտրվողի դերում), զբաղեցնել այնպիսի աշխատատեղեր, որոնց պայմաններից մեկը ՀՀ քաղաքացիության առկայությունն է, կամ՝ ծառայել բանակում: ՀԲ կարգավիճակի հիմնական օգուտը կայանում է առանց արտոնագրի Հայաստան մուտք գործելու, ինչպես նաև վերջերս հնարավոր դարձած անշարժ գույք ձեռք բերելու իրավունքի մեջ:
- Երկքաղաքացիության գաղափարի համար պաշտոնական հիմք հանդիսացող հիմնական միջազգային փաստաթուղթը 1930թ. «Քաղաքացիության օրենքների ընդհարումների շուրջ կոնկրետ հարցեր»-ի մասին Հաագայի համաձայնագիրն է: Այդ ժամանակից ի վեր մի շարք կառավարություններ ընդունել են համաձայնագրում ներառված սկզբունքները՝ երկքաղաքացիության տիպային մեխանիզմների միջոցով ավելի ճկուն հնարավորություններ ստեղծելով: Ըստ Միացյալ Նահանգների անձնակազմի կառավարման վարչության 2001թ.-ի հաշվետվության տվյալների, երկքաղաքացիությունը լիովին կամ մասնակիորեն ընդունված է 53 երկրներում:
- Տվյալ հայեցակարգը նպատակաուղղված է՝
 - Շտկելու պատմական անարդարությունը (որը պատճառեց մարդկային կյանքերի և տարածքների ողբերգական կորուստ և որը դարձավ հայկական սփյուռքի ստեղծման հիմնական գործոնը)՝ ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերի և իրենց նախահայրերի երկրի միջև պաշտոնական կապ ստեղծելով, և
 - Հայրենադարձությանը և դրա միջացով հզորեցնելու Հայաստանի տնտեսական ներուժը և ամրապնդելու ազգային անվտանգությունը :

I. Հայաստանի համար երկքաղաքացիության հնարավոր կարգավորումների հիմքում ընկած տրամաբանությունը

Հայաստանի տնտեսական և ազգային անվտանգության իսկ շահերից է բխում ներգրավել հայությանը (սփյուռքահայությանը և նախկին ՀՀ քաղաքացիներին) Հայաստանի զարգացման գործընթացի մեջ:¹ Այս խմբերի ակտիվ ներգրավումը կնպաստի համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ինտեգրմանը, անմիջականորեն կազդի տնտեսության վրա՝ առաջարկի և պահանջարկի անուղղակի հետևանքների միջոցով, կխթանի Հայաստանի բարեկամական կապերի ստեղծմանը (կամ նույնիսկ քաղաքական ազդեցություն ձեռք բերմանը այն երկրներում, որտեղ կենտրոնացված են մեծ քանակությամբ սփյուռքահայեր), ինչպես նաև կամրապնդի քաղաքացիական ազատությունները և Հայաստանում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացները: Իր հերթին, սփյուռքահայերի համար այն կծառայի որպես ազգային ինքնությունը պահպանելու միջոց՝ Հայաստանի հետ պաշտոնական և ավելի ակտիվ կապերի ամրապնդման միջոցով, ինչն այլապես կվերանա ժամանակի և սերունդափոխության արդյունքում: Այս երկկողմ օգուտը շատ ավելի նշանակալից է, քան այն գաղափարախոսական և քաղաքա-տնտեսական փաստարկները, որոնք ուղղված են Սփյուռքի հետ ակտիվ ներգրավման սխեմաների դեմ: Մեկ երկրին անբաժանելիորեն հավատարիմ մնալու գաղափարը ոչ միայն հնացած է գլոբալիզացիայի այս դարում, այլ նաև բավականին հեշտ կարող է քննադատվել խորը ուսումնասիրման դեպքում:

Հայաստանում երկքաղաքացիության հատուկ կարգավորումների անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է այն փաստով, որ Հայաստանն աշխարհում այն փոքրաքանակ երկրների թվին է պատկանում, որտեղ բնակիչների թվաքանակը էթնիկ սփյուռքի ներկայացուցիչների թվաքանակին հարաբերվում է 1:2 հարաբերությամբ: Ոմանց համար այն մի շարք քաղաքական խնդիրներ է առաջացնում, որոնք հիմնականում կապված են երկքաղաքացիության կարգավիճակ ունեցողներին ընտրելու իրավունք վերապահելու հետ: Մյուսները, Հայաստանի ռազմական պատրաստվածության տեսանկյունից, եկքաղաքացիության ներմուծումը դիտարկում են որպես վտանգ: Այս խմբի ներկայացուցիչները պնդում են, որ երկքաղաքացիությունը կնպաստի արտագաղթի գործընթացին և կորդի գինակոչիկներին զինվորական ծառայությունն անցնել այն երկրներում (ըստ իրենց քաղաքացիության), որտեղ զինված պայքարի վտանգը նվազագույնն է:

Սույն աշխատանքը իրենից մի հայեցակետ է ներկայացնում, որը ի լրումն սփյուռքի ակտիվ ներգրավման հետ կապված օգուտների, անդրադառնում է նաև երկքաղաքացիության հետ կապված բացասական նախապաշարմունքներին: Ինչպես դիպուկ կերպով նկատել է Սփիրոուն (1998).

– Մի գուցե... ընկալմանը կարելի է նպաստել նաև ընդունելով «համաքաղաքացի» հասկացությունը որպես պիտակ նրանց համար, ովքեր մեկից ավել քաղաքացիություն ունեն: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է դիմադրել արմատավորված բացասական հայացքներին պիտակների փոփոխումը կարող է կարևոր դեր կատարել դրանց ընկալման գործում: Երկքաղաքացիության նկատմամբ վաղուց առկա է անհավանություն, ինչը պարտադրվել է ժամանակին (բայց ոչ այլևս)

¹ Վերջինները ստիպված էին հրաժարվել Հայաստանի քաղաքացիությունից այլ երկրի քաղաքացիությունը ընդունելու պատճառով: Այսուհետ այս խումբը հիշատակվելու է որպես «նոր սփյուռք»:

հին միջազգային համակարգերի կողմից: Դրան հակառակ, համաքաղաքացիությունը կարող է դառնալ նոր համաշխարհային շարժման գործոն:

Ներկայումս, հայաստանյան հանրությունը հիմնականում քննարկում է «երկքաղաքացիություն» տերմինը, այլ ոչ թե այն, թե ինչ է դա նշանակում կամ ինչ տարբեր ձևեր այն կարող է կամ պետք է ընդունի՝ հաշվի առնելով Հայաստանի առանձնահատկությունները:

Աշխարհում, ուր երկքաղաքացիության հանդեպ մոտեցումը տատանվում է ընդունումից մինչև լիովին մերժում, Հայաստանը պետք է մի այնպիսի կարգավիճակ ընդունի, որը բավարար ճկունություն կստեղծի համագործակցելու այն երկրների հետ, որտեղ սփյուռքահայեր կան:² Այնպիսի կարգավիճակի ընդունումը, որն ընդունելի չէ որոշ երկրների կողմից (ուր սփյուռքահայերն ունեն իրենց առաջնային քաղաքացիությունը) վտանգում է առաջացնել մի իրավիճակ, երբ սփյուռքահայերի միայն մի մասը կկարողանա օրինականորեն օգտվել այդ կարգավիճակից: Այդ իսկ պատճառով, այս աշխատանքի մյուս հատվածը դիտարկում է երկքաղաքացիության կանոնակարգման հատուկ տեսակի՝ համաքաղաքացիության (ՀՔ³) վրա, որը հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները, հնարավորություն է ստեղծում Հայաստանին օգտվելու հայրենադարձության⁴ տնտեսական և սոցիալական արդյունքներից:

ՀՔ կարգավիճակը սփյուռքահայերին (հին և նոր) առաջարկում է այնպիսի մեխանիզմներ, որոնցից նրանք կարող են օգտվել Հայաստանում՝ ստիպված չլինելով կորցնել այլ երկրի քաղաքացի լինելու իրենց կարգավիճակը: Այն տարբերվում է ներկայումս Հայաստանում գործող հատուկ բնակության (ՀԲ) կարգավիճակից, որը, սփյուռքահայերի հետ մեկտեղ, կարող է տրվել յուրաքանչյուրին, ով ներգրավված է Հայաստանում հետազոտական, մշակութային և ձեռնարկատիրական գործունեության մեջ՝ անկախ իր եթնիկ և ազգային ծագումից:⁵ ՀՔ կարգավիճակը առանձնահատուկ կերպով նպատակաուղղված է սփյուռքի և Հայաստանից արտագաղթած հայերի վրա, որոնք ազգայնացվել են այլուր և ստիպված են եղել հայկական օրենսդրության համաձայն հրաժարվել Հայաստանի քաղաքացիությունից: Նախատեսվում է, որ ՀՔ կարգավիճակը կգոյատևի ՀՀ-ում գործող այլ օրենքների և կանոնակարգումների հետ զուգահեռ: Ստորև քննարկված դրույթները հիմք կհանդիսանան Հայաստանում երկքաղաքացիության կանոնակարգման հիմնական իրավական ակտի՝ համաքաղաքացիության մասին օրենքի ձևավորման համար:

² Քաղաքացիության հարցերի շուրջ ճկունության օրինակ են հանդիսանում Միացյալ Նահանգները, որտեղ երկրորդ քաղաքացիություն ստացողները ստիպված չեն հրաժարվել այն երկրի քաղաքացիությունից, որտեղ նրանք ծնվել են, քանի որ այն նշանակալիորեն կնվազեցնելու ԱՄՆ-ում քաղաքացիություն ստացողների քանակը:

³ Համատեքստից կախված՝ «ՀՔ» հապավումը այսուհետ կնշանակի՝ համաքաղաքացի, համաքաղաքացիություն և համաքաղաքացիական բնակչություն:

⁴ Այն չի բացառում երկկողմ համաձայնության հնարավորությունը երկքաղաքացիության վերաբերյալ Հայաստանի և այլ երկրների միջև, որտեղ առկա են մեծ քանակությամբ սփյուռքահայեր: Դրա փոխարեն, այն ընձեռում է սփյուռքահայերին համակարգված մի տարբերակ ձեռք բերելու Հայաստանի քաղաքացիություն՝ առանց հակասելու այն երկրների օրենքներին, որտեղ ապրում են վերջիններս:

⁵ Հետևաբար, ՀՔ կարգավիճակը չի կարող դիտարկվել որպես մի մեխանիզմ, որը կշտկի հայ ժողովրդին բաժին հասած պատմական անարդարությունը և պրոակտիվ կերպով ներառի իր իսկ ազգականներին:

II. Ներկայացված կարգավորումների դրույթները և պայմանները

Հիմնական դրույթներ

Այս կարգավորման համաձայն ՉԲ կարգավիճակը կշնորհվի՝

1. Սփյուռքահայերին,
2. Հայաստանի նախկին քաղաքացիներին, որոնք 1991 թ. անկախությունից հետո հրաժարվել են Հայաստանի քաղաքացիությունից՝ քաղաքացիություն ձեռք բերելով այլ երկրում (համաձայն ՀՀ Սահմանադրության), և
3. Հայաստանի քաղաքացիներին, որոնք ապագայում կընտրեն քաղաքացիություն այլ երկրում:

ՉԲ կարգավիճակը կշնորհվի հայցորդի Հայաստան ժամանելու դեպքում:

Կարգավիճակը պահպանելու համար ՉԲ-ները պետք է այցելեն Հայաստան [2] ամբողջական շաբաթ ժամկետով յուրաքանչյուր [2] տարվա ընթացքում:⁶

Այս պահանջները կխթանեն ՉԲ-ների Հայաստանի հետ տնտեսական և մշակութային կապերը և կսերտացնեն Հայաստանում տեղի ունեցող գործընթացների հետ նրանց կապը: Դրանից բացի, այն կունենա դրամային ազդեցություններ, որոնք նկարագրված են 11-րդ էջում:

ՉԲ կարգավիճակի կրողները կունենան անսահմանափակ բնակության և աշխատելու իրավունք: Դա կնպաստի Հայաստանի հետ կապի ամրապնդմանը և կհանգեցնի ՉԲ կարգավիճակ ունեցողների իրավունքների հավասարեցմանը Հայաստանի լիիրավ քաղաքացիների իրավունքներին:

ՉԲ կարգավիճակը լինելու է փոխանցելի: Սա մատնանշում է պաշտոնական կապերի ստեղծման անհրաժեշտությունը ոչ միայն սփյուռքահայերի ներկա, բայց նաև ապագա սերունդների հետ: Փոխանցման կանոնը արտացոլում է նաև Հայաստանի համար անհրաժեշտ այն հիմքը, որով պայմանավորված է քաղաքացիության/բնակչության կայունությունն ու աճը: Առաջարկվում է, որ ՉԲ քաղաքացիություն ունեցող ծնողների (միակողմանի կամ երկկողմանի) զավակները ինքնաբուխ կերպով ստանան ՉԲ կարգավիճակ: Սակայն երեխաները, որոնց առնվազն մեկ ծնողը Հայաստանի քաղաքացի է, կարող են ստանալ միայն լիիրավ քաղաքացիություն (այսինքն, ՉԲ կարգավիճակը այս երեխաների դեպքում չի գործի): Սա կպահանջի արական սեռի այս երեխաներին ծառայել բանակում՝ զինապարտության բավարար տարիք ձեռք բերելուն պես (տես ստորև):

Այլ երկրներում քաղաքացիություն ստացող Հայաստանի քաղաքացիները ինքնաբուխ կերպով չեն ստանա ՉԲ կարգավիճակ և այն ստանալու համար ստիպված կլինեն պաշտոնապես դիմում ներկայացնել:

Ստորև բերված Նկար 1-ում ամփոփված են քննարկվող ՉԲ կարգավիճակի իրավունքները և պարտականությունները՝ դիտարկելով այն արդեն գոյություն ունեցող լիիրավ քաղաքացիության և ՉԲ կարգավիճակի համատեքստում:

⁶ Այս պարտականության վերաբերյալ բացառությունները սկզբունքորեն կարող են ներառվել՝ բացառելու հաշվանդամներին և նրանց, ովքեր որոշակի տարիքից անցնելու դեպքում դժվարանում են այցելել Հայաստան:

Իրավական հիմունքներ և հարակից հիմնախնդիրներ

Երկրի ներսում գործող օրենքի տեսանկյունից *jus sanguinis* կամ ծնողների կողմից ձեռք բերված քաղաքացիության իրավունքը հիմք կհանդիսանա ՉՔ կանգավիճակի համար:⁷ Այս սկզբունքը, սակայն, առաջարկվում է ընդարձակել, որպեսզի ՉՔ կարգավիճակն իր մեջ ներառի ժառանգության հիմքի վրա նման կարգավիճակ ունենալու իրավունք: Այս դեպքում ծնողների անմիջականորեն Չայաստանի քաղաքացի լինելը պարտադիր չէ, սակայն անհրաժեշտ է ապացուցել հայկական ծագումը:⁸ *Jus sanguinis* սկզբունքի այս տարբերակը կիրառվում է մի շարք երկրներում, օրինակ, Իսրայելում, Չուինաստանում, Իռլանդիայում և Գերմանիայում:

Միջազգային օրենքի և միջազգային հարաբերությունների տեսանկյունից ՉՔ կարգավիճակը որևէ խնդիր չպետք է առաջացնի: Սկզբունքորեն, ՉՔ կարգավիճակը հատուկ կարգավիճակ և ոչ լիիրավ քաղաքացիություն է, և այդ իսկ պատճառով այն չպետք է հակասի այլ երկրների քաղաքացիությանը վերաբերող օրենքներին և կանոնակարգումներին: Կարելի է լինել այլ երկրի քաղաքացի և ունենալ ՉՔ կարգավիճակ, ինչը չի պարտադրում դառնալ Չայաստանի լիիրավ քաղաքացի: Բավականին կարևոր է այն փաստը, որ ՉՔ կարգավիճակը դժվար թե խնդիր առաջացնի Չայաստանի ներկա պարտավորությունների և եվրոպական կառույցներում ներգրավվելու հետագա ձգտումների համար, քանի որ 1997թ.-ին ընդունված քաղաքացիության մասին համաձայնագիրը չէզոք է՝ երկքաղաքացիության տեսակների կարգավորումների տեսակետից (Եվրախորհուրդ, 1997):

Դիվանագիտական պաշտպանության խնդիրը հավանաբար վիճարկելի կլինի, սակայն այն կարելի է լուծել կառավարվելով միջազգային նորմերով: Առաջարկվում է, որ ՉՔ-ները Չայաստանի Չանրապետության կողմից դիվանագիտական պաշտպանություն չեն ունենա, եթե նրանք գտնվում են իրենց այլ քաղաքացիության երկրում: Չայաստանում գտնվելիս ՉՔ-ները դիվանագիտական պաշտպանություն կունենան այն երկրի կողմից, որի անձնագրով մուտք են գործել Չայաստան:⁹ Եվ վերջապես, դիվանագիտական պաշտպանությունը հնարավոր կարող է լինել ՉՔ կարգավիճակը կրողների համար, երբ նրանք ճանապարհորդեն Չայաստանի և իրենց առաջնային քաղաքացիության երկրի սահմաններից դուրս: Այս պաշտպանվածության չափը կարող է սահմանվել Չանաքաղաքացիության մասին օրենքով և համարժեք լինել լիարժեք դիվանագիտական պաշտպանությանը, որն ունեն Չայաստանի քաղաքացիները:

ՉՔ կարգավիճակը իր կրողներին իրավունք կտա ստանալու Չայաստանի անձնագիր, որը չի տարբերվի Չայաստանի քաղաքացիների անձնագրից, բայց որը կկարողանան տարբերակել միայն Չայաստանի միգրացիոն իշխանությունները (երկիր մուտք գործելու կետերում տեղակայված էլեկտրոնային համակարգի միջոցով): Սա հնարավորություն կստեղծի ՉՔ կարգավիճակի կրողներին օգտվել նույն միջազգային ճանապարհորդման արտոնություններից, որոնցից օգտվում են Չայաստանի քաղաքացիները:

⁷ Համաձայն Չայաստանի Չանրապետության Սահմանադրության (30.1 Հոդված) այս սկզբունքը դիտվում է քաղաքացիությունը սահմանողներից մեկը:

⁸ Տես էջ 11, այս խնդրի շուրջ հատուկ առաջարկի մասին:

⁹ Սա Շվեդիայում գործող երկքաղաքացիության դեպքն է, ինչպես նշված է 2001թ. երկքաղաքացիության մասին օրենքում և դիտարկված է Գուլստավսոնի (2002) աշխատությունում:

Քվեարկելու իրավունք

Սույն հայեցակարգի համեմատաբար նոր (և հավանաբար անսովոր) հատկանիշներից մեկը (որոնք վերաբերում են քաղաքական և ազգային անվտանգության խնդիրներին, որոնց անդրադարձ է կատարվում այս աշխատանքում) կայանում է նրանում, որ համաքաղաքացու քվեարկելու և հանրային պաշտոնների համար ընտրվելու իրավունքները ներդաշնակ չեն: Հայաստանում առաջարկվում է հետևյալ տարբերակը. չնայած հանրային պաշտոններ զբաղեցնելու իրավունքին, ՀՔ կարգավիճակների կրողները ինքնաբուխ կերպով ընտրելու իրավունք չեն ունենա:¹⁰ Այս անհամաչափության հիմնական պատճառը կայանում է Հայաստանում ներկայումս առկա այն մտավախության մեջ, որ Հայաստանում չբնակվող և այդ իսկ պատճառով Հայաստանի սոցիալական և զարգացման կարիքների, ինչպես նաև քաղաքական միջավայրի մասին ոչ հիմնավոր պատկերացում ունեցող անծինք ցանկալի չէ որ ունենան իրավունք քվեարկելու և որոշելու, թե ով է վարելու երկրի պետական քաղաքականությունը:

Սույն խնդրի շրջանակներում ՀՔ կարգավիճակը սկզբունքորեն քվեարկելու իրավունք է տալիս այն անձանց, ովքեր հիմնավոր պատկերացում ունեն Հայաստանի մասին (տես ներքևում): Դա ՀՔ-ին որոշակի պետական պաշտոնում նաև ընտրվելու հնարավորություն է տալիս, եթե Հայաստանում հանրությունը քվեարկի ՀՔ-ի օգտին՝ որպես մասնագիտական և այլ բարձր որակական հատկանիշներով օժտված անձնավորության:

Այսպիսով, ՀՔ-ն մշտապես պետական մակարդակով ընտրելու իրավունք կունենա միայն եթե բավարարի ստորև նշված պայմաններից մեկին (այսուհետև՝ որակավորող պայմաններ), որոնցից յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս ունենալու այդ «հիմնավոր պատկերացումը» Հայաստանի մասին.

1-ին պայման. [1] տարվա զինվորական ծառայություն կամ համապատասխան քանակությամբ այլընտրանքային աշխատանք ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար, կամ

2-րդ պայման. [3] տարվա բնակություն Հայաստանում՝ ընտրություններին մասնակցելու իրավասու լինելու համար:¹¹

ՀՔ-ներին, որոնք բավարարում են որակավորող պայմանները, Հայաստանում ընտրությունների իրավունքի շնորհումը չպետք է ընդհանրապես հակասի այն երկրների օրենքներին, որտեղ ՀՔ-ները առաջնային քաղաքացիություն ունեն: Չնայած ավելի քան մեկ երկրում ընտրելու իրավունք ունենալը կարող է որոշ դիտորդների կողմից դիտվել անցանկալի, այնուամենայնիվ այն միանշանակորեն թույլ է տալիս այն անձանց, որոնք վաստակել են այդ իրավունքը, Հայաստանում իրականացնել իրենց քաղաքական և քաղաքացիական իրավունքները: Օրինակ, Շվեդիայում երկքաղաքացիության հնարավորության հարցն ուսումնասիրող հանձնաժողովն եզրակացրեց, որ կրկնակի քվեարկելու իրավունքը համարվում է

¹⁰ Չնայած ՀՔ կարգավիճակի այս տարրը կարող է հակասել քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի 25-րդ հոդվածի պահանջներին (որի համաձայն երկքաղաքացիություն ունեցող անձանց համար պետք է երաշխավորվի ընտրելու իրավունքը, եթե նրանց հասու է նաև ընտրվելու իրավունքը), այնուամենայնիվ ածխարհում կան բացառություններ, երբ այն նախատեսված չէ երկրի օրենսդրությամբ:

¹¹ Սահմանադրական բարեփոխումների արդյունքում 30-րդ հոդվածը թույլ է տալիս ոչ քաղաքաց բնակիչներին քվեարկել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

«երկքաղաքացիության անցանկալի հետևանք, որից հնարավոր չէ խուսափել»:
(Գուևտաֆսոն, 2002):¹²

Այն ՀՔ-ները, որոնք որոկավորող պայմաններից մեկին բավարարելու միջոցով ընտրվելու իրավունք են ստացել, բայց որոնք սակայն որոշել են բնակվել Հայաստանից դուրս, հնարավորություն կունենան մասնակցել ընտրություններին՝ արտասահմանում գտնվող Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններում:

Այն ՀՔ-ների համար, որոնք նախկին ՀՀ քաղաքացիներ են եղել և իրենց կարգավիճակը ձեռք են բերել պաշտոնական գործընթացի արդյունքում, որակավորող պայմանները բավարարելու ժամանակը սկսվում է վերջիններիս ՀՔ-ի կարգավիճակ ստանալու օրվանից (օրինակ, 2-րդ պայմանը բավարարելու նպատակով նրանք չեն կարող օգտագործել բնակության ժամանակաընթացքը, երբ հանդիսանում էին Հայաստանի քաղաքացիներ):

Ընտրվելու և քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակվելու իրավունք

Յուրաքանչյուր ՀՔ իրավունք կունենա *ընտրության* արդյունքում զբաղեցնել պետական պաշտոն, բացառությամբ Նախագահի պաշտոնը: Վերջինս հնարավոր կլինի միայն լրացուցիչ պայմանները բավարարելու արդյունքում:¹³ ՀՔ կարգավիճակի այս ոլորտը կառավարվելու է առկա կանոնադրությամբ, որը սահմանում է պետական պաշտոն զբաղեցնելու նպատակով ընտրությունների մասնակցելու գրանցման պահանջները:¹⁴

ՀՔ-ները կարող են *նշանակվել* քաղաքացիական ծառայության պաշտոնի, և վերջիններիս նշանակումը մեծամասամբ կկառավարվի ծառայողական էթիկայի շրջանակներում, և ոչ թե որոշակի աշխատանք կատարելն արգելող կանոններով: Օրինակ, այն ՀՔ-ն, որը նաև Ֆրանսիայի քաղաքացի է, չպետք է հավանաբար նշանակվի Հայաստանի արտաքին գործերի նախարարության Ֆրանսիայի հետ կապերի վարչությունում: Տարբեր երկրներ տարբեր ձևով են մոտենում այս հարցին: Որոշ երկրներ ոչ մի սահմանափակում չեն դնում երկքաղաքացիություն ունեցող անձանց վրա, որոնք զբաղեցնում են նշանակովի կամ ընտրովի պաշտոններ (օրինակ՝ Միացյալ Նահանգները) ի տարբերություն այն երկրների, որոնք արգելում են երկքաղաքացիություն ունեցող անձանց զբաղեցնել որոշակի ընտրովի և քաղաքացիական ծառայության պաշտոններ (օրինակ՝ Մեքսիկան):

¹² Կան բացառություններ, այնուամենայնիվ, որտեղ երկրները պնդում են, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքները պետք է կիրառվեն միայն այն երկրում, որտեղ որոշել է բնակվել երկքաղաքացիություն ունեցող անձը (մյուս քաղաքացիությունը դարձնելով *պասիվ*): (Տես՝ Իսպանիայի և Լատինական Ամերիկայի մասին քննարկումը Համմարի գրքում (1985, էջ 447): Որոշ երկրներ նույնպես թույլ չեն տալիս *բացակայող քվեարկություն*, այդպիսով ստիպելով իրենց քաղաքացիներին, որոնք բնակվում են արտասահմանում, քվեարկությանը մասնակցելու նպատակով ժամանել երկիր:

¹³ Երբ ՀՔ-ն, որը 10 տարի բնակվում է տվյալ երկրում, ինչպես պահանջվում է գործող Սահմանադրությամբ, ընտրվում է Նախագահ, ապա նա պարտավորվում է հրաժարվել այլ երկրի (երկրների) քաղաքացիությունից:

¹⁴ Նշված պահանջները, որոնք տարբերվում են երկրից երկիր և հանրային պաշտոնների մակարդակից մակարդակ, ներառում են նախապես սահմանված քանակի ստորագրությունների ապահովում, որոշակի կրթական և եկամուտի / ակտիվների պահանջների բավարարում և այլն:

Չարկային պարտավորություն

ՀՔ-ները կհարկվեն համաձայն միջազգայնորեն ընդունված նորմերի, որոնք հիմնականում պահանջում են հարկումը կատել բնակության երկրում և/կամ այն վայրում, որտեղ գտնվում են հարկատուի հիմնական միջոցները: Երկրորդ համաձայնագրերի միջոցով հնարավորին կլինի խուսափել կրկնակի հարկումից, ինչը կարող է առաջանալ այն դեպքերում, երբ ոչ հայաստանյան ազբյուրներից ստացված եկամուտը հարկման ենթակա կլինի Չայաստանում:

Չայաստանյան ազբյուրներից ստացված եկամուտները հարկման ենթակա կլինեն անկախ նրանից, թե ՀՔ-ն այն ստեղծել է բնակվելով Չայաստանում (անկախ բնակության ժամկետից) թե ոչ, եթե հարկային օրենսդրությամբ հատուկ ազատում չի նախատեսված: Չարկային օրենսդրության այս դրույթները կկիրառվեն հիմնականում միայն տարվա այն ժամանակահատվածի համար, երբ ՀՔ-ն համարվում էր ոչ ռեզիդենտ կամ երբ եկամուտը ստեղծվել էր օտարերկրյա ազբյուրներից:

Չայաստանի համար ՀՔ կարգավիճակը ներմուծելու արդյունքում տնտեսական առաջընթացի ազբյուրներից մեկը հնարավոր է լինի լրացուցիչ բյուջետային ներհոսքերը, որը կառաջանա ՀՔ ուղղակի և անուղղակի հարկման արդյունքում: Արդարության որոշակի տարրեր ապահովելու, միևնույն ժամանակ վարչարարական մղձավանջից խուսափելու համար՝ կապված յուրաքանչյուր ՀՔ եկամուտի / ակտիվների մակարդակը որոշելու հետ, կսահմանվի հաստատագրված վճար / հարկ, որը կախված կլինի տվյալ երկրի (որտեղ ՀՔ-ն ունի առաջնային քաղաքացիություն) եկամտի միջին մակարդակից: Եթե ՀՔ-ն ունի մեկից ավելի քաղաքացիություն, ապա այն գումարը, որը կպահանջվի վերջինիս կարգավիճակը պահպանելու համար կլինի այդ երկրների համար սահմանված վճարի մեծագույնը:

Չայաստանում բնակվող ՀՔ-ները, որոնք եկամտահարկը կգերազանցի հաստատագրված վճարից, կազատվի հաստատագրված վճարումներից:

ՀՔ կարգավիճակի ներմուծման և պահպանման արդյունքում Չայաստանի գանձապետարանի եկամտի հիմնական ազբյուրները հետևյալը կլինեն.

- ՀՔ կարգավիճակը պահպանելու համար [2] շաբաթ Չայաստանում գտնվելու պահանջի հետ կապված գործարարության արդյունքում անուղղակի հարկերը՝ օրինակ, օդանավով ճամփորդելու, բնակվելու, պարեն, ծառայություններ և այլի օգտագործման հետևանքով, և
- Ուղղակի հարկերը, որոնք գանձվում են Չայաստանում ստացված եկամտից, և
- Ուղղակի հարկերը, որոնք գանձվում են արտերկրում որոշակի գործունեությունից ստացած եկամտից:¹⁵

Կարելի է կանխատեսել (և հարկային մեխանիզմների միջոցով խթանել), որ ազատական հարկային ռեժիմը Չայաստանում կնպաստի, որպեսզի ՀՔ-ները երկար

¹⁵ Չնայած այս հոսքերի ճշգրիտ հաշվարկները որոշակի ենթադրություններ և մոդելավորում են պահանջում և այս աշխատության քննարկումների շրջանակներից դուրս են, այնուամենայնիվ նախնական հաշվարկներով յուրաքանչյուր 1,000 ՀՔ-ից տարեկան ԱՄՆ 1 մլն է սպասվում, ինչը բավականին լավ արդյունք է լրացուցիչ դրամային եկամուտներ ստանալու համար: 15 Այսպիսով, եթե այս հաշվարկը դիտենք որպես ուղեցույց, ապա յուրաքանչյուր 100,000 ՀՔ-ից պետական բյուջեի եկամուտները կկազմեն տարեկան ԱՄՆ 100 մլն հավելյալ եկամուտ (օրինակ, մոտավորապես Չայաստանի ներկայիս դրամային եկամուտների մեկ ինքուրոդը), ինչը ներկա իրավիճակի համեմատ բավականին մեծ գումար է:

բնակվեն Հայաստանում՝ հնարավորություն ունենալով Հայաստանում հարկ վճարել արտերկրում ստացված եկամուտներից:

ՀՔ-ն կունենա սահմանափակ հնարավորություն օգտվելու Հայաստանում սոցիալական ապահովության և կենսաթոշակային նպաստներից՝ կախված կենսաթոշակային համակագի մեջ նրանց ներդրման չափից: Առաջարկվում է ՀՔ-ներին, որոնք բնակվում են Հայաստանում, թույլատրել բացել անձնական կենսաթոշակային հաշիվներ և հասու լինել պետության կողմից որոշակի ընդհանուր նպաստների: Այս հարցերը կարող են քննարկվել ներկայումս կառավարության կողմից մշակվող կենսաթոշակների մասին նոր օրենքի սահմաններում:

Ձիմվորական պարտավորություն

Հայաստանում երկքաղաքացիության հետ կապված բարեփոխումների շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության անցնելու խնդիրը ամենավիճահարույց հարցերից մեկն է: Չնայած շատ երկրներ միացել են երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրերի՝ հնարավորություն տալով զինվորական ծառայությունն անցնել միայն բնակության կամ քաղաքացիության երկրում, կան նաև այլ պետություններ, որոնք այս հարցում ոչ մի բացառություն թույլ չեն տալիս (տես՝ Հենմար, 1985): Վերջիններս պահանջում են, որ իրենց քաղաքացիները ծառայեն իրենց երկրի բանակում՝ առանց հաշվի առնելու այլ քաղաքացիություն ունենալու հանգամանք(ներ)ը կամ զինվորական պարտավորությունները:

Իրատեսական կլինի ակնկալել, որ ՀՔ կարգավիճակը իր փիլիսոփայությամբ և կառուցվածքով լինելու է այս հարցի ազատական կողմի լուսապատկերը: Իսկապես, առաջարկվում է, որ ՀՔ-ները անկախ իրենց տարիքից և սեռից ազատված լինեն որևէ զինվորական պարտավորություն կատարելուց: Նշված կանոնը, այնուամենայնիվ, ունի երկու կարևոր բացառություններ, որոնցից մեկը, ինչպես քննարկվել էր վերևում, կապված է ՀՔ-ներին, ցանկություն ունենալու դեպքում, ավելի շատ իրավունքներ շնորհելու հետ (տես որակավորող պայման NՊ 1), մինչդեռ մյուսը բխում է աշխարհաքաղաքական անհրաժեշտությունից՝ Հայաստանում հզոր և մարտունակ բանակ ապահովելու նպատակով: Այսպիսով, ՀՔ-ի զինապարտության կանոնից բացառելը կկիրառվի միայն այն դեպքում, երբ.

- ՀՔ-ները կորոշեն ծառայել բանակում՝ քվեարկելու իրավունք ստանալու նպատակով (ինչպես նշված էր վերևում), կամ
- Հայաստանին պատերազմ է հայտարարված:

Վերոնշյալ երկրորդ տարբերակը գործի կդրվի միայն Հայաստանի պետականությանը բացառիկ իրավիճակներում սպառնացող վտանգի դեպքում, որի ժամանակ կպահանջվի.

- Ազգային ժողովի ձայների երկու երրորդը,
- Գլխավոր հրամանատարի հրամանը,
- Հայաստանում հայտարարված համընդհանուր զինակոչ:

Այն ՀՔ-ները, որոնց պատերազմի ժամանակ կանչել են զինվորական ծառայության և որոնք սակայն հրաժարվում են զինապարտ լինելուց, պետք է պատասխանատվության ենթարկվեն զինվորական տրիբունալի առջև առանց որևէ

սահմանափակումների և անկախ իրենց քաղաքացիությունից:¹⁶ Չնայած այս գործոնը հնարավոր է որ կսահմանափակի այն սփյուռքահայերի քանակը, որոնք կցանկանան ձեռքբերել ՉՔ կարգավիճակ, այնուամենայնիվ նշված դրույթը ՉՔ-ների պարտավորությունները ավելի կնոտեցնի Հայաստանում բնակվող լիիրավ քաղաքացիների պարտավորություններին:¹⁷ Ավելին, դրույթը պետք է կիրառվի միայն ծայրահեղ դեպքերում, երբ սպառնալիքի տակ է դրված Հայաստանի պետականությունը (օրինակ, երբ վտանգը մեղմացնելու կամ վերացնելու համար համազգային ջանքեր են պահանջվում):

Չնայած մի շարք երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի¹⁸ համաձայն երկքաղաքացիները հնարավորություն ունեն զինվորական ծառայությունը կատարել միայն իրենց մշտական բնակության երկրում (այսպիսով արգելք դնելով կրկնակի զինակոչմանը), կան այնպիսի երկրներ, որոնք ոչ մի բացառություն թույլ չեն տալիս: Կան երկրներ, որտեղ զինվորական ծառայությունը պարտադիր է (ոչ կամավորական) և նախատեսված է հատուկ երկրների համար:¹⁹ Այլ երկրներում զինվորական ծառայությունը պարտադիր է բոլոր երիտասարդների համար՝ անկախ այլ երկրներում զինվորական ծառայության օրենքների, որտեղ զինվորական ծառայության կոչվածները քաղաքացիություն ունեն կամ բնակվում են: Բացի այդ, որոշ միջազգային օրենքները թույլ են տալիս կողմերին վերացնել կրկնակի զինակոչման արգելքը արտակարգ իրավիճակի, զորահավաքի և պատերազմի դեպքում: Վերջապես, շատ դեպքերում Հայաստանի բանակում ծառայության մեջ մտնելը ինքնաբուխ կերպով չի զրկի զինակոչին այլ երկրում իր քաղաքացիության կարգավիճակը: Հետևապես, կանխատեսվում է, որ պատերազմի դեպքում ՉՔ-ների հանընդհանուր զինակոչի դրույթը չի հակասի միջազգայնորեն ընդունված նորմերին: Բացի այդ, որոշ դեպքերում պարտադիր ծառայությունը կարող է վերագրվել նաև զինակոչի այլ երկրում զինվորական ծառայությանը:

ՉՔ կարգավիճակի վերահսկում

ՉՔ-ի հետ կապված գործընթացների վերահսկողությունը չպետք է լուրջ խնդիրներ առաջացնի համապատասխան մարմինների համար: ՉՔ կարգավիճակ շնորհելու համար պատասխանատու գործակալությանը (օրինակ՝ Արտաքին գործերի նախարարությունը) և կատարող գործակալությունները (օրինակ՝ մաքսային ծառայությունը, հարկային վարչությունը, կենտրոնական ընտրական կոմիտեն, և այլն) իրար հետ կապող կենտրոնացված տվյալների բազա կարող է ստեղծվել՝ վարչարարական սխալները նվազեցնելու, թափանցիկությունը բարձրացնելու և անօրինական ձևով շահույթ ստանալու հնարավորությունները սահմանափակելու նպատակով: Նշված էլեկտրոնային համակարգը պետք է հասանելի լինի ինտերնետով և ունենա բանկային հատկանիշներ ՉՔ-ներին հնարավորություն տալու համար (1) ձեռք բերել արձանագրությունների տպված տարբերակները որպես տեղի ունեցած գործարքի ապացույց (օրինակ՝ վերջին երկու տարիների ընթացքում Հայաստան

¹⁶ Չնայած այլ երկրից (որտեղ ՉՔ-ն բնակվում է) հաճնում պահանջելու պրատիկան չի կիրառվի, այնուամենայնիվ ՉՔ-ները, որոնք խախտել են իրենց զինվորական պարտականությունը, Հայաստան ժամանալու պես քրեական պատասխանատվության կենթարկվեն :

¹⁷ Նման օրինակ դրույթ չունենալը անարդարար կլիներ՝ հաշվի առնելով ներկա առաջարկում առկա քայլերը, որոնք ուղղված են հավասարեցնելու ՉՔ-ների իրավունքները լիիրավ քաղաքացիների իրավունքների հետ:

¹⁸ Այն ներառում է Երկքաղաքացիության դեպքում զինվորական պարտավորությունների վերաբերյալ երկքաղաքացիության դեպքերի նվազեցման մասին համաձայնագիրը (Ստրասբուրգ, 1963թ. հունիս):

¹⁹ Օրինակ՝ Թուրքիան երկքաղաքացիներին չի պարտադրում ծառայությունը Իրանում և հունաստանում:

կատարած այցելության կամ հաստատագրված վճարի / հարկի վճարման մասին և այլն), և (2) կատարել ՉՔ կարգավիճակը պահպանելու համար նախատեսված հաստատագրված տարեկան վճարը: Այս կապակցությամբ, որտեղ հնարավոր է, ՉՔ կարգավիճակի վերահսկողության, ինչպես նաև էլեկտրոնային արտոնագիր շնորհելու համակարգի (որի հարցում Հայաստանը առաջատար է) փորձը պետք է օգտագործվի:

Անձի հայկական ծագման սահմանման ու սահմանային մակարդակի (օր.՝ հայկական ծագման թեստ) հարցը, վերահսկողության տեսանկյունից կարծես ամենահակասական խնդիրներից է: Առաջարկվում է որպես հայկական ծագման չափանիշ դիտել ազգությամբ հայ պապ և տատ ունենալը (այսինքն՝ 50% հայկական արյուն ունենալուն համարժեք): Այս կանոնի հետ կապված բացառությունները կարող են իրականացվել (և կանոնակարգվել) նշված սահմանից ցածր հայցորդների դեպքում, եթե օրինակ դիմորդը սփյուռքում Հայաստանի հետ կապված գործերում շոշափելի ներդրում է ունեցել:

Ի հավելումն հայկական ծագումը բացահայտելու թեստի, ՉՔ կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ է նաև ունենալ մաքուր քրեական անցյալ:

III. Առաջադրված կարգավիճակի ազդեցությունը Հայաստանի ներկայիս քաղաքացիների վրա

Հայաստանի ներկայիս քաղաքացիների համար ՉՔ կարգավիճակի ներմուծումը չի հանգեցնի որևէ *ուղղակի* հավելյալ իրավունքների կամ պարտավորությունների:

ՉՔ որպես կարգավիճակ ընդունելու միակ *անուղղակի* ազդեցությունը Հայաստանի քաղաքացիների վրա կլինի այն, որ նրանք պաշտոնական կարգավիճակի ձեռք բերման իրավունք կունենան (այսինքն, ՉՔ կարգավիճակ)՝ որևէ այլ երկրում քաղաքացիություն ստանալու դեպքում:²⁰ Չնայած նախկին քաղաքացիների համար ՉՔ կարգավիճակ ստանալու հնարավորությունը կարող է պոտենցիալ կերպով ավելացնել այլ երկրներում քաղաքացիություն ստանալ ցանկացող ՀՀ քաղաքացիների թիվը (քանի որ հնարավորություն կստեղծվի պաշտոնական կապերը մշտապես չխզել Հայաստանի հետ), այնուամենայնիվ նշված ազդեցության չափը հնարավոր է կրճատվի՝ Հայաստանի տնտեսական և սոցիալական հետագա զարգացման առաջընթացի, ինչպես նաև մարդու և սեփականության իրավունքների պաշտպանության ոլորտում ավելի բարենպաստ միջավայրի ստեղծման հետևանքով:

²⁰ Ինչպես նշվեց վերևում, գործող օրենսդրության համաձայն՝ Հայաստանի քաղաքացիները, որոնք ձեռք էին բերում այլ երկրի քաղաքացիություն, պարտավորված էին լինում հրաժարվել Հայաստանի քաղաքացիությունից:

Գրականության ցանկ

Council of Europe, 1997. “European Convention on Nationality,” («Քաղաքացիության շուրջ եվրոպական համաձայնագիր») Strasbourg, Council of Europe, European Treaty Series No. 166.

Declaration of Independence (Անկախության հռչակագիր), 1990.
<http://www.armeniaforeignministry.com/htms/doi.html>

Gustafson, Per, 2002. “Globalization, Multiculturalism and Individualism: the Swedish Debate on Dual Citizenship,” («Գլոբալիզացիա, բազմամշակութայնություն և ինդիվիդուալիզմ. Երկքաղաքացիության շուրջ շվեդական բանավեճը») *Journal of Ethnic and Migration Studies*, Vol. 28, No. 3, էջ 463-481.

Hammar, Tomas, 1985. “Dual Citizenship and Political Integration,” («Երկքաղաքացիություն և քաղաքական ինտեգրում») *International Migration Review*, Vol. 19, No. 3, Special Issue: Civil Rights and the Sociopolitical Participation of Migrants , էջ 438-450.

Legomsky, Stephen, 2002. “Dual Nationality and Military Service: Strategy Number Two,” («Երկքաղաքացիություն և զինվորական խառնայություն՝ համար երկու ռազմավարություն») Washington University School of Law, Faculty Working Paper Series, No. 02-9-07

Spiro, Peter J., 1998. “Embracing Dual Nationality,” («Ողջունելով երկքաղաքացիությունը») Carnegie Endowment for International Peace, <http://www.ceip.org/programs/migrat/migspiro.html>

OPM, 2001. “Citizenship Laws of the World,” («Քաղաքացիության մասին աշխարհի օրենքները») United States Office of Personnel Management, Investigations Service. <http://www.opm.gov/extra/investigate/IS-01.pdf>

Նկար 1. Քաղաքացիների պատասխանատվություններն ու սահմանափակումները՝ տարբեր սցենարների

ըստ

